ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Առաջնորդվելով Սահմանադրության 108-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածը, Ազգային ժողովում՝ իրավունքի ուժով ստեղծվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:

Նկատի առնելով հանգամանքը, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ինչպես նաև «Մենք ենք մեր սահմանները» համազգային դրամահավաքի շրջանակներում հավաքագրված միջոցներից 52,703,114,000 ՀՀ դրամը «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու և դրանք օգտագործելու վերաբերյալ քննիչ հանձնաժողովի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար, այս փուլում, հանձնաժողովին անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները (փաստաթղթերը).

1. «Մենք ենք մեր սահմանները» համազգային դրամահավաքի անցկացման նպատակները, դրամահավաքի վերաբերյալ հրապարակային

հայտարարությունները, դրամահավաքին մասնակցած անձանց (ֆիզիկական և իրավաբանական) քանակը:

2. «Հայաստան» համահայկական հիմադրամի կանոնադրությունը՝ բոլոր փոփոխություններով և լրացումներով:

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը և դրանում փոփոխությունները՝ նվիրաբերություն կատարելու որոշման կայացման պահից մինչև սույն հարցման պատասխանի տրամադրման օրը:

4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված հիմնադրամի գույքի տնօրինման կարգը, ինչպես նաև հոգաբարձուների խորհրդի կողմից՝ նվիրատվություն (ներ) կատարելու մասին իր որոշումների կատարման ընթացքի վերահսկման ընթացակարգը և փաստացի իրականացված վերահսկողության արդյունքները:

5. Նվիրատվություն (նվիրաբերություն) կատարելու որոշման համար հիմք հանդիսացած հանգամանքները:

6. Նվիրաբերություն կատարելու մասին հոգաբարձուների խորհրդի բոլոր նիստերի արձանագրությունները: Սույն կետի ներքո ակնկալվող տեղեկատվությունը պետք է պատասխանի նաև հարցերին. Իրավասու էր արդյո՞ք հիմնադրամը իրականացնելու նույն ծրագրերը, ինչը նվիրաբերության գումարներով իրականացրել է կառավարությունը, քննարկվել է արդյո՞ք կառավարության կողմից իրականացվելիք ծրագրերը հիմնադրամի կողմից անմիջականորեն իրականացնելու տարբերակը: Եթե այո, ապա ի՞նչ հիմնավորմամբ է հիմնադրամը հրաժարվել դրանք անմիջականորեն իրականացնելուց:

7. Հիմնադրամն ունի՞ Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացված գանձապետական հաշիվ: Նվիրաբերության գումարները արդյո՞ք այդ հաշվեհամարի հետ առնչություն ունեն:

8. Տեղեկատվություն 5-րդ կետում նշված նիստերի անցկացման վերաբերյալ խորհրդի անդամներին ծանուցելու, նիստերի օրակարգերը, դրանցում ներառված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը խորհրդի անդամներին (անվանական) տրամադրելու մասին: Նվիրատվությանը (ներին) կողմ քվեարկած խորհրդի անդամները:

9. Նվիրատվության նպատակների՝ հիմնադրամի կանոնադրությանը համապատասխանելու վերաբերյալ իրավասու մարմնի եզրահանգումը (փորձագիտական եզրակացության դեպքում նաև դա):

10. Կառավարության կողմից նվիրատվության գումարի փաստացի ծախսման ուղղությունները և արձանագրված արդյունքները, ինչպես նաև նվիրաբերության և կառավարության կատարած ծախսերի վերաբերյալ փորձագիտական, մասնագիտական և աուդիտորական եզրակացությունները:

Բոլոր պատեճենները հարկ է ներկայացնել բնօրինակի հետ համապատասխանության հաստատման նշանմամբ՝ իրավասու անձի ստորագրությամբ:

Ակնկալում ենք տեղեկատվության ստացումը հնարավորինս կարճ ժամկետում:

Տեղեկացնում եմ, որ սույն գրությունում նշված տեղեկությունների (փաստաթղթերի) ներկայացման պահանջը, որը «Հայաստան» համահայկական հիմնադրամին է ներկայացվել դեռևս 24.11.2021թ., հաստատվել է նաև քննիչ հանձնաժողովի՝ 30.11.2021թ. թիվ մեկ նիստում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

01.12.2021թ.

Ընդամենը 3 էջ:
էջ թիվ 3: